

ՊԱՏԱՍԽԱՆ

Առ Կ. Մ. — Ներեցէք որ Խըմ-  
բագրութիւնս կարող չէ հրատարա-  
կել ձեր յօդուածն, որով քանի մի  
պաշտօնական անձանց կեանքն ու ա-  
րարքը կը նկարագրէք: Ետո հաւա-  
նական է, որ ձեր գրածներն ճիշդ են  
և ստոյգ աղջիւրներեք քաղուած, բայց  
ամենէն առաջ մտածելու ենք թէ  
ինչ օդուա կարող ենք քաղել այդպի-  
սի մի հրատարակութենէ: Թերեւս  
պիտի ասէք, թէ ճշմարտութիւն է և  
պէտք չէ ծածկել: Կընդունիմք, որ  
ճշմարտութիւնն խօսելու է և խօսե-  
լով սուութիւնը և չարութիւնը խայ-  
տառակելու: Բայց գիտեք արդեօք,  
որ մեր ժաղովրդի տգիտութեան պատ-  
ճառաւ, այն անձինքն որոց կեանքը  
մերկացուցած էք դուք, ժաղովրդեան  
կամ լու եւս ասել մարդելցզներու  
առջեւ մեծ վարկ ու համարում ու-  
նին: Խմբագրութիւնս արդէն ձեր  
յօդուածը կարդացած էր եւ բոլոր  
իրողութեանց տեղեակ, բայց մի  
և նոյն ժամանակ ահագին գովեստ-  
ներ տեսաւ Պօլսոյ լրագրաց ոմանց  
մէջ, թէրեւս դուք այն սուտ գո-  
վեստներէն ստիսեալ գրած էիք ձեր  
յօդուածը. եթէ ձեր գրուածը հը-  
րատարակուէր, կարելի է գովեստ-  
ներու թիւը աւելի պիտի բազմանար  
և ահա պիտի յառաջ գար մի անվերջ  
բանակռիւ և գարձեալ ճշմարտու-  
թիւնը պիտի մնար առանց աղջեցու-  
թեան: Միթէ ամեն օր չէք աեսներ  
դուք այս ընթացքը մեր ազգային գը-  
րաւոր առարիղին մէջ, մին կը ջատա-  
գովէ, միւսն կը պարսաւէ, և փոխա-  
նակ ճշմարտութիւնն պարզուելու կը  
կը տեսնես որ անձնական հայհայնք-  
ներ եւ կրից անբարի հետեւանքներ

միայն կը մնան գրական հրատարակի  
վերայ, Եթէ մար ժողովուրդը քըն-  
նութեան օգասին վարժած լինէր. Եթէ  
մեր պարբերական թերթերէն ոմանք  
ճշմարտութիւնը ըստ զահէին ստութեն՝  
եթէ մեր գրագէտներէն ոմանք ան-  
բարցականութեան պաշտպան չկանգ-  
նէին, հաւատացէք որ մինչեւ ցարդ  
քննութեան բավին մէջ շատ և շատ  
իրողութիւններ զտուած էին. և ազ-  
գըն եւս իւր բարեկամն ու թշնամին,  
իւր օգուտան ու վեան բաւականին  
ճանացած: Միէ քանի քանի իրողու-  
թիւններ և պաշտօնական անձանց ա-  
րարքներ գրաւոր հրատարակը ելած  
են և ատարիններով գրութեան նիւթ  
զած: այս դուք լաւ գիտեք: բայց  
գրեթէ վերջնական վճիռ ամեննեւին  
չեն ընդունած: Ամենայն ինչ անորոշ,  
ամենայն ինչ խառնաշփոկ: քու նը-  
կարագրած սատանան ուրիշ առջեւ  
հրեշտակ, քու տեսած հրեշտակն ու-  
րիշ առջեւ սատանայ: մի կողմէն  
պարաւ միւս կողմէն գովեստ: Եթէ  
բան չունիս խօսէ և գրէ: գարձեալ  
յայն բարբառոց յանապատի: Մի կարծէք  
թէ այս ասելով յուսահասութեան և  
թմրութեան քարոզ կը կարդամք: ոչ  
երբէք, այլ կամիմք մեր ազգային իրո-  
ղութեանց արդի վլճակն պատկերացը  
նել: Արդէն այն անձինքն, որոց կեան-  
քըն ու արարքը նկարագրած էր դուք,  
շատ անդամ գրութեան նիւթ եղած  
են, ոռ ժամանակ մի պաշտօններէ հե-  
ռացած են և գարձեալ պաշտօններու  
մէջ մնած: մէկ գաւառի ժաղովրդէն  
բողոքուած, միւս գաւառի մէջ ըն-  
դունուած: Կատագերգութիւն մ' է  
այս, որ կը խաղացուի, և ամեննէն մեծ  
դերասանն է տգիտութիւնն: Քանի  
որ տգիտութիւնը կ'իջևէ, դեռ շատ  
շարիքներ և աղէտներ պիտի հասնին  
մեր խեղչ ժաղովրդեան գլխուն: Ուստ-

տի մեր ազգին արմատական և հիմ-  
նական բարիք մ' ընելու համար, ա-  
մենքս պիտի ջանանք տգիտութեան  
իշխանութիւնը կործանել, մոքերը  
ճշմարտութեան պատրաստել սրտե-  
րը բարոյականութեան վարժեցնել:  
Եւ այս ուրիշ բանով ըստիր, եթէ  
ոչ մեր խորին ուշադրութիւնը մեր  
ազգային կրթութեան և գաստիարա-  
կութեան վրայ դարցնելով: Հետեւա-  
պէս աւելի ուրախալի էր դաստիարա-  
կութեան վերաբերեալ յօդուածներ  
ընդունիլ ձեզմէն եւ հրատարակել,  
քան թէ այն տիսուր նկարագիրը, ո-  
րով նկարագրած էիք մի քանի անձանց  
արարքներն :

— Ենդղիացի գիտնական հպիսկու-  
պոս մի , ճանապարհորդելով 'ի Պա-  
ղևստին եւ փափաքելով Արեւելեան .  
Քրիստոնէից նկատմամբ տեղեկու-  
թիւններ քաղել , այցելութեան եկաւ  
մեր Ա . Պատրիարքին և սոյն այցելու-  
թեան ժամանակ , որ քանի մի ժամ  
տեւեց , երկարօրէն խօսակցեցաւ Ա .  
Պատրիարքի հետ , և մեր ազգայնու-  
թեան , Ակեղեցւոյ և դաւանութեան  
մասին կարեւոր ծանօթութիւններ  
ստանալով մեծաւ գոհութեամբ մեկ-  
նեցաւ , ցաւ յայտնելով միայն որ  
յարդ խիստ թերի գաղափար ունե-  
ցած են մեր Ազգի և Ակեղեցւոյ նը-  
կատմամբ :

ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆՔ

Փաղաքիս նորընտիր կառավաշ-  
րին Վսեմափայլ Ալի Պէյ ամսոց 17  
ին քաղաքս ժամանեց , որում դիմա-  
ւորուած էին երեք Պատրիարքու-  
թեանց և բոլոր Հիւպատոսարանաց  
թարգմաններն եասախօճիներով համե-  
գերձ : Օգն գեղեցիկ էր և քաղաքիս  
քնակչոց զբեթէ մեծ մասն ձանեա-  
լու որհաց վերաց կըսպասէին նորեկ կա-  
ռավարչի հանդիսաւոր մաւաբն տես-  
նելու : Իսկ 19 իւ ՚ի ներկայաւթեան  
բոլոր սպատօնսկալաց , թարգմանաց  
և քաղմախուան հանդիսականաց  
Վսեմ կառավարչի հասատութեան  
կայսերական Հրավարտակն կարդա-  
ցուեցաւ և այնուհետեւ պաշտօնա-  
կան այցելութիւնքն սկսան :

## ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

## ՆՈՐ ԳԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԳՈՐԾՆԱԿԱՆ

Յօվիւնաց Ա. Ա. Առաքելուս

Այսն նոր հրատարակութիւնն .  
յորմէ մի օրինակ նուելը դրկած է  
Մեծ . Հեղինակին՝ Ա . Ամուսյու Թան-  
գարանին, գիւբուսոյց եղանակաւ յօ-  
րինաւած է նորավարժից համար :

Կան արգեն քանի մի ԳՈՐԾՆԱԿԱՆ  
ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ և ահա ՄԵծ .  
Սուրեն եւս ներկայ ՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ կը  
մատուցանէ Ազգային դպրոցաց . մայ-  
քենի լեզուի ուսումն գիւղացնելու  
համար :